ՈՐՈՇԻՉ-ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՌՈԶԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայերենի բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը լինում է ստորադասական և համադասական[1]*։ Ստորադաս բաղադրիչներով բարդությունների մեջ ղգալի տեղ են գրավում որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերությամբ բաղադրիչներ ունեցող բարդ բառերը, որոնց վերջին եզրը սովորաբար գոյական է, իսկ առաջին բաղադրիչը կարող է արտահայտված լինել գոյականով, ածականով, թվականով, դերանունով, դերբայով, որոնք, լրացնելով երկրորդ բաղադրիչին, արտահայտում են վերջինիս ցույց տված առարկայի հատկանիշը։*

Բաղադրիչների որոշիչ-որոշյալի հարաբերություն ունեցող բարդությունների որոշվող (երկրորդ) բաղադրիչը իմաստային տեսակետից գերադաս է առաջին բաղադրիչի նկատմամբ և ցույց է տալիս հասկացությունների այն շրջանակը, որին պատկանում են ամբողջ բարդությամբ արտահայտված ավելի նեղ ծավալով հասկացությունները։ Այլ կերպ ասած, բարդության հիմնական բաղադրիչը հաճախ ունենում է լայն, ընդհանրացնող իմաստ՝ արտահայտելով ավելի լայն հասկացություն, քան ամբողջ բարդ բառը։ Որոշող հասկացությունն էլ (բարդության առաջին բաղադրիչը) կարող է ունենալ ընդհանուր վերացական նշանակություն։ Այդ ընդհանրությունը կրում է այլ բնույթ, այնքան, որքան այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե շատերի համար ընդհանուր հատկանիշի հասկացությանը, այլ հատկանիշին, որը կարող է որևէ տեսակետից բնորոշել հասկացությունների մի ամբողջ շարք, կոնկրետացնելով վերջիններիս իմաստը և նեղացնում է դրանց ծավալային ընդգրկումը։ Այսպես, ճաշասեղան բարդության երկրորդ բաղադրիչը ցույց է տալիս, որ տվյալ առարկան, որն արտահայտված է բարդությամբ, պատկանում է սեղանների դասին, իսկ առաջին բաղադրիչը նշում է տվյալ սեղանի՝ ճաշելու համար նախատեսված լինելը։

Հիշյալ բարդությունների ձևաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշիչ-որոշյալ ընդհանուր կաղապարի մեջ առանձնացնել մի քանի մասնակի կաղապարներ.

ա) Գոյական+գոյական, որով կազմված բարդություններում գոյականով արտահայտված առաջին բաղադրիչը կատարում է որոշիչի դեր և ցույց է տալիս որոշյալի որևէ հատկանիշը։ Այսպես, օրինակ՝ ցախավել, արծաթավարս, լուսաստղ, երկաթուղի, կինոնկար, քարափ, քարսիրտ, տուն-թանգարան, գայլախոտ *և այլն։ Գոյական որոշիչ ունեն նաև մի շարք բարդություններ, որոնց մեծ մասը բառապատճենումներ են, իսկ առանձին դեպքերում նաև փոխառու-*

1 Ս. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 201։

թյուններ. ինչպես՝ ցուցահանդես-վաճառք. ֆիլմ-օպերա. բժիշկ-թերապևտ. կինոթատրոն, վագոն-ռեստորան և այլն։

բ) Շատ տարածված են ածական+գոյական բաղադրությամբ բարդությունները, որոնց բաղադրիչները նույնպես նախորդների նման կապված են որոշիչ-որոշյալ հարաբերությամբ[2]։ Ընդ որում, առաջինն արտահայտում է առարկայի որևէ հատկանիշ, իսկ երկրորդը՝ առարկան կամ առարկայացված հասկացություն, որն ունի առաջին բաղադրիչով արտահայտված հատկանիշը։ Այսպես, օրինակ՝ գանգրահեր, խստադեմ. բարեխիղճ. լայնաթիկունք. բարեձև, բթամիտ, սրամիտ և այլն։

Ածական որոշիչ ունեցող բարդություններում հնարավոր է, որ նույն բառը որպես որոշիչ հանդես գա մի շարք բարդություններում, ինչպես՝ սևահեր, սևամորուք, սևապոչ, սևազգեստ, սևահող, սևամորթ, սևսիրտ և այլն։

Այս երևույթը բացատրվում է ածականի լայն իմաստային ընդգրկմամբ, որը հնարավոր է դարձնում միևնույն ածականի զուգորդումը տարբեր գոյականների հետ, իսկ այդ նշանակում է, որ միևնույն ածականի արտահայտած հատկանիշը կարող են ունենալ տարբեր առարկաներ։ Այսպես՝ նուրբ կարող է լինել դեմքը (նրբադեմ), կազմվածքը (նրբակազմ), իրանը (նրբիրան) և այլն։

Մյուս կողմից, նույն բաղադրիչի տարբեր բարդություններում հանդես գալը վկայում է, որ տարբեր հասկացություններ կարող են ունենալ ընդհանուր հատկանիշներ։ Որքան շատ է նույն բառը հանդես գալիս որպես որոշիչ, այնքան լայն է այն հասկացության շրջանակը, որը բնորոշվում է նույն հատկանիշով։

Հնարավոր է նաև, որ միևնույն որոշյալը լինի բարդության հիմնական բաղադրիչ տարբեր բարդ բառերում և բնորոշվի տարբեր որոշիչներով. ինչպես, օրինակ՝ նավ բառով կազմվում են մի շարք բարդություններ (տիեզերանավ, տուգանավ, մոտորանավ, օդանավ, շոգենավ և այլն), սենյակ բառով (ննջասենյակ, հյուրասենյակ, առանձնասենյակ. ճաշասենյակ և այլն)։

Այս և նախորդ դեպքը վկայում է որոշիչ-որոշյալ կաղապարի լրացուցիչ բառակազմական հնարավորությունների և բառաբարդման տեխնիկայի ճկունության մասին։

գ) Բարդության գոյականով արտահայտված բաղադրիչի որոշիչը կարող է լինել թվական և արտահայտել երկրորդ բաղադրիչով նշանակած առարկաների, երևույթների քանակը, ինչպես՝ միադեմ, երկանիշ, երկսեռ, եռահատոր, հնգաթև, հնգամարտ, վեցնիստ և այլն։

դ) Որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությամբ են կապված նաև դերանուն+գոյական կաղապարով կազմված մի շարք բարդությունների բաղադրիչները, որոնցից դերանունով արտահայտված բաղադրիչը (երբ ցուցական դերանուն է) կարող է մատնացույց անել երկրորդ բաղադրիչով նշանակած առարկաները, երևույթները տարածական ու ժամանակային հարաբերությամբ՝ այսոր, նույնաձև. այդժամ, այդօրինակ. այսկերպ, այդկերպ և այլն։ Իսկ երբ բարդության որոշիչ բաղադրիչները անորոշ ու հարաբերական դերանուններ են, ապա այդ դեպքում առարկաների և որպես այդպիսին մտածված երևույթների հատկանիշները ցույց են տրվում անորոշ, ինչպես՝ այլադեմ, ինչկերպ, որտեղ, որչափ, այլկերպ և այլն։

---

2 Հմմտ. Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 234։

ե) Արդի հայերենում կենսունակ են նաև բայահիմք+գոյական և դերբայ+գոյական կառուցվածք ունեցող բարդությունները. ինչպես՝ ենջասենյակ. նաշասենյակ. հյուրասենյակ, վառելափայտ, գրատախտակ. խաղաթուղթարակ, խաղաղաշտ, մարզասրահ. սալահատակ, ծխախոտ և այլն։ Նման բարդություններում գործ ունենք անորոշ դերբայի սեռական հոլովաձևերի հետ, որոնք բաղադրության մեջ ամենատարբեր կողմերից բնութագրում են բազմազան իմաստներ ունեցող առարկաներ։

Ինչպես երևում է վերևում շարադրվածից, մեծ մասամբ որոշիչ-որոշյալի հարաբերությամբ կապված են ածական+գոյական կաղապարով կազմված բարդ բառերը, որոնք ղգալի թիվ են կազմում որոշիչ-որոշյալ ընդհանուր կաղապարով կազմված բարդությունների մեջ։ Դա բացատրվում է գոյականի հետ ածականի շատ ակտիվ զուգորդելիությամբ։

Այս կաղապարով կազմվում են.

ա) Նոր գոյականներ. վերնազգեստ, վերնաշապիկ, վրան-թիկնոց, տուն-թանգարան, ենգամյակ, ենգամարտ և այլն։

բ) Ածականներ. ենֆշաթև, գեղաժպիտ, լայնեգր, դառնահամ, կարմրատոտիկ, ոսկեվարս, քարեղեմ, շարամիտ, քարեսիրտ և այլն։

գ) Դերանուններ. այստեղ. այդտեղ, այնտեղ, այսչափ, այդչափ, այնչափ և այլն։

Որոշիչ-որոշյալ բառակազմական կաղապարն ունի իմաստային նշանակություն։ Նրանով կազմված բարդություններում առաջին բաղադրիչը կոնկրետացնում է երկրորդ բաղադրիչի արտահայտած իմաստը, որն ավելի լայն է, քան առաջին բաղադրիչինը։ Որոշիչը բնութագրում է որոշյալին այս կամ այն (ներքին և արտաքին հատկանիշի) տեսակետից։ Նման բարդություններում առաջին բաղադրիչը ցույց է տալիս, թե ի՞նչ տեսակետից է դիտվում, առանձնացվում տվյալ առարկան, երևույթը, որի հետևանքով բարդ բառն ստանում է նոր իմաստային երանգավորում, քան ունեն նրա բաղադրիչները և արտահայտում է այլ հասկացություն։ Հիմնականում որոշիչ-որոշյալ շարահյուսական փոխհարաբերությամբ բաղադրիչներով բարդություններն արտահայտում են հատկանիշներ և այդ հատկանիշները կրող առարկաներ՝ լայնաթիկունք, սեազգեստ, կապուտաչյա, միակն, երկսեռ և այլն։

Որոշիչ-որոշյալ կապակցությամբ բաղադրիչներ ունեցող բարդությունների մեջ առաջին բաղադրիչը մի ընդհանուր իմաստային դաշտ է, որը կարելի է անվանել հատկանիշի դաշտ։ Հնարավոր է առաջին բաղադրիչը ներկայացնել ավելի նեղ ընդգրկում ունեցող իմաստային դաշտերով, որոնք կարող են ցույց տալ հատկանիշների տարատեսակները։ Ընդ որում, որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությամբ բաղադրիչներ ունեցող բարդության կազմիչները տարբեր կերպ են կապվում իմաստային դաշտերի հետ, և բոլոր բարդությունները չէ, որ կարող են ունենալ իմաստային դաշտերի հեշտությամբ բաժանվող բաղադրիչներ։ Իմաստային դաշտերի հեշտությամբ բաժանվող խմբերի մեջ կան մի շարք օրինաչափություններ։ Այսպես, ուսումնասիրվող կաղապարի մեջ ընդգրկվող բարդությունների առաջին բաղադրիչները կարող են բնութագրել առարկան արտաքին հատկանիշների տեսակետից։Դրանք կարող են պատկանել.

ա) Գույների դաշտին և բնութագրել իրենց գերադաս անդամով ներկա-

յացվող առարկան գույնի տեսակետից. ինչպես՝ կարմրաթև, դարչնագույն, ներմակակուրծք. սևապոչ. դեղնամորթ. սպիտակամորթ. կապուտաչյա և այլն։

բ) Նավալի դաշտի մեջ ընդգրկվող ածականները կարող են արտահայտել առարկայի կամ երևույթի ծավալային հատկանիշներ. լայնաթիկունք, մեծամարմին, մեծամիտ, լայնեզր, բարձրավանդակ, բարձրահարկ, հաստամարմին, փոքրամարմին, վիթխարածավալ, լայնածավալ և այլն։

գ) Առարկան կամ երևույթը արտաքին այլևայլ հատկանիշների տեսակետից բնութագրող որոշիչներ. սիրունադեմ, սիրունաաես, գեղեցկադեմ, գանգրահեր, գեղաժպիտ, գեղատեսիլ, սրածայր, ծուռթաթ և այլն։

Իսկ բարդ բառերի կազմի մեջ մտնող մի շարք որոշիչներ կարող են ցույց տալ առարկաների ներքին հատկանիշներ. բարեսիրտ, բարեհոգի, բարեհամբույր, ազնվահոգի, ազնվասիրտ, չարամիտ, տաքարյուն, սլաղարյուն և այլն։

Առարկաների ներքին հատկանիշներ ցույց տվող բաղադրիչներ ունեցող բարդությունների մի այլ խմբի մեջ առաջին բաղադրիչը կարող է պատկանել համի իմաստային դաշտին և ցույց տալ որոշվող առարկայի ինչպիսի համ ունենալը՝ անուշահամ, քաղցրահամ, թթվահամ. դառնակաթիլ. դառնակորիզ. թթվասեր և այլն։

դ) Թվականները կարող են մտնել քանակ ցույց տվող իմաստային դաշտի մեջ, և բարդության թվական բաղադրիչը կարող է արտահայտել առարկայի քանակական կողմը. ճնգաթև, ճնգամյակ, եռանկյուն, վեցնիստ, երկկոզմ, յոթնամյակ, ճնգամարտ և այլն։

ե) Ուրիշ որոշիչներ բնութագրում են առարկան գտնվելու տեղի տեսակետից. վերնաշապիկ, վերնահարկ, ներքնաշապիկ, ներքնահարկ, մեջտեղ, բարձրավանդակ, բարձրահոն, վերնաշերտ և այլն։

Որոշիչ-որոշյալ կաղապարով կազմված բարդությունները կարելի է բաժանել առարկաներ և առարկաների հատկանիշներ նշանակող բարդությունների։

Առարկաներ ցույց տվող բարդություններն իրենց հերթին կարող են ունենալ հետևյալ ենթատեսակները.

ա) Թանձրացական հասկացություններ արտահայտող բարդություններ. գայլախոտ, տուն-թանգարան, վառելափայտ, հյուրասենյակ, վերնազգեստ, թռիչքուղի, կինոնկար, գաղթօջախ, թթվասեր և այլն։

բ) Վերացական հասկացություններ արտահայտող բարդություններ. կիսամյակ, եռամսյակ, ճնգամարտ, բռնցքամարտ, ճեծանվավազք և այլն։

Առարկաների հատկանիշներ ցույց տվող բարդություններն արտահայտում են.

ա) Առարկաների արտաքին-ձևային հատկանիշներ. ծուռթաթ, սրածայր, լայնաթիկունք, հաստաբազուկ, գանգրահեր, գնդաձև և այլն։

բ) Գունային հատկանիշներ. սևամորթ, արյունագույն, կարմրաթև, ծյունաթարթիչ, կապուտաչյա, սևահեր և այլն։

գ) Առարկաների ներքին հատկանիշներ. քաղցրահամ. քաղցրարմատ, քաղցրաբլիթ, անուշահամ, մեղրահամ, դառնակորիզ, թթվահամ և այլն։

դ) Մարդկանց մտավոր-բարոյական հատկանիշներ. քարսիրտ, սրամիտ, քաղցրալեզու, բթամիտ, բացսիրտ, մեծահոգի, մեծամիտ, փոքրոգի։

ե) Քանակական հատկանիշ, ինչպես նաև կարգ. ենգաթև, երկսեռ, վեցնիստ, եռանկյուն, եռանատոր առաջնակարգ *և այլն։*

զ) Տարածական ու ժամանակային հարաբերությամբ հատկանիշ ցույց տվող բառեր. այստեղ, այնտեղ, այդտեղ, նույնտեղ, այսժամ *և այլն։*

է) Անորոշ կերպով առարկայի հատկանիշ ցույց տվող բարդ բառեր. այլաձև, այլակերպ, այլադեմ, այլասեռ, այլազգի, այլացեղ *և այլն։*

Որոշիչ-որոշյալի շարահյուսական փոխհարաբերությամբ բաղադրիչներով բարդությունների շարահյուսական փոխակերպները շատ հաճախ արտահայտվում են բարդ ածանցավոր ու նկարագրական ձևերով. այսպես, օրինակ՝ ծխախոտ→ծխելու խոտ, բարեսիրտ→բարի սրտով, բարի սիրտ ունեցող, հնգաթև→հինգ թևեր ունեցող և այլն։

Բարդ բառերի և նրանց համապատասխան բառակապակցությունների (եթե դրանք կան) իմաստային մերձավորությունը բացահայտելու որևէ օբյեկտիվ չափանիշ չկա։ Այդ պատճառով, նման դեպքերում միշտ դիմում ենք ինտուիցիային, որի հետևանքով բարդ բառերի շարահյուսական փոխակերպները կարող են լինել մեկից ավելի։ Մի շարք բարդություններ իմաստափոխված են կամ ունեն արդպիսի բաղադրիչներ։ Դրանց շարահյուսական համարժեքները բացահայտելիս չպետք է բավարարվել ուղղակի փոխակերպներով, այլ անհրաժեշտ է տալ լրացուցիչ բացատրություններ։

Իմաստափոխված բարդությունների մեջ զգալի տեղ են գրավում մարդիկ, կենդանիներ, բույսեր անվանող բարդությունները։ Ընդ որում, այդ անվանումները տրվում են նրանց այս կամ այն հատկանիշի (հագուստի, բնավորության, մարմնի կամ որևէ մասի, գույնի և այլն) հիման վրա և ունենում են որոշակի սուբյեկտիվ երանգավորում։ Նշենք դրանցից մի քանիսը. բացբերան, ծուռթաթ, կարմրատոտիկ, երկարականջ, սևապոչ, կարմրափորիկ, ճերմակուրծք, կարճատոտիկ, կարմրակտուց, մկրատապոչ *և այլն։ Սրանք հիմնականում օգտագործվում են խոսակցական լեզվում և ունեն ոճական նշանակություն։*

Գրական լեզվում որոշիչ-որոշյալ կաղապարով կազմված բարդ բառերի ոճական կիրառությունները հավաստելու նպատակով բերենք մի քանի բնագրային օրինակներ. «Այն օրվանից աշխարհ եկան կակաչները սրտասև...» (ՀՇ, Սխ, էջ 100)։ «Ձյունաթարթիչ թաց աչքերից աղբյուրներ է հանում նա...» (ՀՇ, Սխ, էջ 6)։ «Ու վեր ելավ Սիամանթոն իր հոտի հետ դառնաձայն...» (ՀՇ, Սխ, էջ 7)։ «Արագածի, Արարատի հայացքի դեմ սգավոր, Սև տուֆակերտ մի պալատի տրտմաճանեռս դահլիճում, Պառկած էր նա...» (ՊՍ, ԱԶ, էջ 260)։

Որոշիչ-որոշյալի հարաբերությամբ բարդությունների մեջ կարող է իմաստափոխվել.

ա) Առաջին բաղադրիչը. ինչպես՝ խաղցրալեզու, դառնաժպիտ, ախրանուն, ձյունաթարթիչ, դառնաձայն, տրտմահանդես, սևասուգ *և այլն։*

բ) Երկրորդ բաղադրիչը (որը ավելի քիչ է հանդիպում). ինչպես՝ յոթնածուխ, գաղթօջախ *և այլն։*

գ) Ամբողջ բարդությունը. ինչպես՝ պարզերես, բացճակատ, երկարականջ, բացբերան, ծակաչք, պաղարյուն, տաքարյուն *և այլն։*

Ուսումնասիրվող բարդ բառերի բաղադրիչների հարաբերությունը կարող է հանգեցվել որոշվող անվան և որոշող որևէ խոսքի մասի (գոյական, ածական, դերանուն, բայ) շարահյուսական հարաբերությանը, որն ավելի ցայտուն է.

դարձնում բարդ բառի և բարդության բաղադրիչները կազմող բառերից բաղկացած բառակապակցությունների իմաստային մերձավորությունը. ինչպես, օրինակ՝ արծաթափայլ — արծաթի փայլով. արծաթի փայլ ունեցող. թթվասեր→ թթվեցրած սեր, կարմրատոտիկ → կարմիր տոտիկներով. կարմիր տոտիկներ ունեցող և այլն։ Սակայն վերջին ասվածը չի վերաբերում այն բարդ բառերին, որոնց առանձին բաղադրիչները իմաստափոխված են. ինչպես՝ գաղթօջախ, յոթնածուխ, զառնաձայն. քաղցրալեզու, արծաթավարս, քարսիրտ, տխրանուն և այլն, ինչպես նաև այն բարդություններին, որոնք ամբողջությամբ են վերաիմաստավորված (պարզերես, բացնակատ. ծակաշի և այլն)։ Նշված բարդություններում բարդ բառերին համապատասխանող բառակապակցությունների իմաստային մերձավորությունը դժգունացած է։

Վերջին օրինակներում, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ գործ ունենք որոշիչ-որոշյալ կապակցությամբ բարդությունների հետ, միշտ իմաստային ծանրաբեռնվածությունն ընկնում է որոշվող բաղադրիչի վրա, իսկ որոշող բաղադրիչի դերը սահմանափակվում է որոշվող բառի հատկանիշը ցույց տալով։

Որոշիչ-որոշյալ կաղապարով կազմված բարդ բառերը կենսունակ են ժամանակակից հայերենում, նրանցով կազմվել և կազմվում են բազմաթիվ բարդություններ, որոնք հանդես են գալիս գոյականների, ածականների, դերանունների համակարգերում և հարստացնում են հայերենի բառապաշարը։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՇ, ՍԽ—Հովհաննես Շիրազ, Սիամանթո և Խչեզարե, Երևան, 1970։
ԳՍ, ԱՋ—Պարույր Սևակ, Անլռելի զանգակատուն, Երևան, 1966։

СЛОЖНЫЕ СЛОВА ТИПА ОПРЕДЕЛЯЮЩЕЕ — ОПРЕДЕЛЯЕМОЕ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

РОЗА МКРТЧЯН

Резюме

Данный тип словообразования с подчинительным отношением компонентов довольно продуктивен в современном армянском языке. Определяющий компонент в подобных конструкциях уточняет и конкретизирует значение определяемого компонента, выражая его внешние и внутренние свойства. По данной модели образуются как имена существительные, так и прилагательные, местоимения и наречия.

Отношения этих компонентов могут быть выражены в виде синтаксической связи между определяемым именем и какой-либо определяющей частью речи. Это обстоятельство ярко демонстрирует семантическую близость сложных слов и соответствующих им словосочетаний при условии, если сложное слово и его компоненты не претерпели семантических изменений.